Հավատով Մովսեսը...

Շնորհակալություն, Նևիլ եղբայր։ Բարի լո՛ւյս, բարեկամներ։ Ինչ լավ է այսօր գտնվել այստեղ՝ խորանում։ Ես մտածեցի, որ գուցե, եթե կարողանամ խնդրել Նևիլ եղբորը, որ այս առավոտ խոսի, ուրեմն ես էլ կփորձեմ այսօր երեկոյան։ Եվ հետո ես դեռ այդ ժամանակ ուզում էի անցկացնել այսօրվա կիրակնօրյա դպրոցի դասը։ Եվ ինչ...Տերը կամենա, մենք կփորձենք անցկացնել այս կիրակնօրյա դպրոցի դասը։

2 Հիմա, արդեն մոտ երկու շաբաթ է, ինչ եկել եմ։ Եվ, ինչպես գիտեք, ավետարանչական դաշտում ես շատ էի նյարդայնանում, ուժասպառ էի եղել և հազիվ էի ի վիճակի շարունակելու։ Եվ այդ ժամանակ ես պետք է գայի՝ մի փոքր հանգստանալու։ Մոտ երեք օր անցկացրի Վոլֆ Քրիդ Դեմում՝ Կենթուքիում, որտեղ ծնվել եմ։ Ես մտածեցի. «Ո՛հ, ես ինձ հիմա ուղղակի հրաշալի եմ զգում։ Լավ եմ»։

3 Եվ ես վերադարձա տուն, ու առաջին մանր բանը որին բախվեցի եկամտահարկի հետ կապված ինչ–որ պետական գործ էր։ Նորից հայտնվեցի նույն վիճակում։ Հասկացա, որ լավ հանգստանալու համար ինձ մեկ կամ երկու շաբաթից ավելի է հարկավոր։

4 Հիմա իմ ծառայության մեջ փոփոխություն է լինելու։ Ես պլանավորված ոչ մի հավաքույթներ չունեմ։ Դրա համար ես մի տեսակ մի կողմ եմ քաշվել, և մտածեցի, որ հիմա հաջորդ մի քանի շաբաթների ընդացքում ես ուղղակի կհանգստանամ՝ լիովին կհանգստանամ և կսպասեմ Տիրոջը։

5 Ձեզանից շատերը, ովքեր հին ժամանակներից այստեղ են, երկար ժամանակ է, որ մեզ հետ են եղել, հիշում են, թե Տերն ինչ է ասել մեզ։ Նա միշտ կատարել է այն, ինչ ասել է, որ անելու է։

6 Դուք հիշում եք, որ դեռ ամենասկզբից այստեղ՝ եկեղեցում, այն առավոտը, երբ մենք խորանի քարը դրեցինք, ինչպես Նա...Այն գրված և ամփոփված է քարի մեջ, Աստվածաշնչիս առաջին էջի վրա։ Այն առավոտ այդ փառավոր տեսիլքում ասվեց. «Սա քո խորանը չէ»։

7 Ես ասացի. «Որտե՞ղ է այն, Տեր»։ Նա դրեց ինձ երկնքի

տակ։ Եվ մի Ձայն հնչեց։ Ես նայեցի և տեսա այդ երեք խաչերը ծառերի տեսքով և դրանց պտուղները, և այլն։ Դուք գիտեք, թե ինչ տեսիլք էր դա։ Տարիներ է, ինչ այն գրվել է։

8 Վերջերս այնտեղ մի հին գիրք վերցրեցի և կարդացի մի քանի բաներ, որոնք Տերն էր ասել, կանխասել, դրանք արդեն կատարվել են։ Դեռահասների հանցավորության մասին, և այն մասին, թե ինչպես է ավարտվելու պատերազմը, և այդ բոլոր բաները կատարվել են։

9 Այդ փառավոր մարգարեություններից մեկում միայն երկու բան է մնացել։ Այն է, որ մեքենաները ընթանալու են ճանապարհով հեռակառավարման վահանակների միջոցով, ձվի տեսք կունենան, միայն դու չես վարում այն։ Ինքնակառավարվող է։ Ու հետո մի մեծ կին է բարձրանալու, որովհետև Ամերիկան կանանց երկիր է։ Եվ դա...Մի մեծ կին է բարձրանալու և այս երկրում նախագահ կամ նման մի բան է լինելու։ Այնուհետև տոտալ ոչնչացում կլինի։ Ամբողջ ազգը բնաջինջ է լինելու։

10 Եվ դա ես կանխասում եմ...Հիմա սա Տերը չի ասում (Մյուսը՝ կնոջ մասին, Տերն է ասում)։ Բայց 1933 թվականին ես կանխասել էի, որ մինչև 77–ական թվականները աշխարհը բախվելու է տոտալ ոչնչացման հետ։

11 Այն ժամանակ ես չգիտեի, որ նրանք ինչ–որ բան ունեն, որը կարող է ոչնչացնել դա, ինչպես որ հիմա ունեն, բայց ես տեսա այս ազգը ամբողջությամբ ոչնչացված, միայն ծառերի կոճղերը և նման բաներն էին մնացել։

12 Ուստի սա հեռու չէ։ Եվ եթե այս բոլոր մնացած բաները կատարվել են ճիշտ այնպես, ինչպես Նա ասել էր, ուրեմն սա էլ կկատարվի, ինչպես Նա ասել է այստեղ՝ Սուրբ Գրքում, այն, ինչ Նա ասել է։ Եթե Քրիստոսը եկավ առաջին անգամ, ուրեմն կգա նաև երկրորդ անգամ։ Եվ այն ամենը, ինչ Նա ասել է, կկատարվի։ Եվ պատշաճորեն տեսնելով սա և իմանալով, որ մենք...մեր համարը՝ որպես ազգ, կանչելու վրա է, իմանալով, որ Եկեղեցին Իր հափշտակությանը մոտ է։ Սա շարժում է ծառայողի կամ ցանկացածի աշխարհականի սիրտը, երբ գիտես, որ մենք այդ օրվա և ժամանակվա մեջ ենք ապրում։ Ամենափառավոր ժամանակը, որում մարդը երբևէ ապրել է երկրի վրա, հիմա է, սա Եկեղեցու համար է։ Դրա համար ես, անշուշտ, ձեր աղոթքների կարիքն ունեմ։

13 Հետո ես տեսա խորանում և հասկացա, որ նրանք...եկեղեցում խորհուրդներից մեկի և այլն վերաընտրություններ են անցկացնելու և նման բաներ:

14 Եվ, և եկեղեցին փոքրիկ հավաքույթի, փոքր արթնության կարիքն ուներ: Եվ դուք միշտ բարի եք եղել իմ նկատմամբ և օրհնել եք ինձ: Իմ այստեղ լինելը կարծես օրհնություն է եղել ձեզ համար: Եվ ես վստահ եմ, որ ձեզ հետ լինելն էլ ինձ համար է օրհնություն եղել: Դուք նաև միշտ ընդունել եք իմ ասացը, որպես Ճշմարտություն, ինչպես ես դա տեսել եմ Տիրոջմով: Եվ ես, ես դա շատ եմ գնահատում:

15 Դրա համար ես էլ միացա, իսկ հետո պարզեցի, և անհրաժեշտ եղավ կարգավորել մեր եկեղեցին խորհուրդների, այնուհետև ընտրությունների հետ կապված և այլն: Իսկ հետո, հետո, դրանից հետո ես մտածեցի հեռանալ և մի փոքր հանգստանալ ավետարանչության դաշտ նորից վերադառնալուց առաջ:

16 Թող դա ձեր մեջ մնա: Հիմա, սա ոչ թե դրսիների, այլ այս խորանի համար է: Մենք այս խորանի հետ ենք ուզում հավաքույթ անցկացնել, որ ամեն բան, ամեն սխալ, ամեն բաները, որոնք նստվածք են թողել կամ գուցե փոքրիկ վիրավորանքներ մեկը մյուսից. ես դրանցից յուրաքանչյուրին անդրադառնալու եմ և բերելու եմ դրանք երես առ երես: Դրա համար եթե չեք ուզում բախվել դրան, ավելի լավ է լքեք երկիրը, որովհետև բախվելու եք դրա ամեն կետին, ինչպես սովորություն ունեինք անելու այստեղ՝ խորանում: Ամեն բան պետք է հարթեցվի, որովհետև մենք քույրեր և եղբայրներ ենք, ովքեր մասակցել են հաղորդությանը՝ Քրիստոսի մարմնին, օրհնությունների սեղանի շուրջ: Եվ միայն սատանան կանի ինչ–որ մի բան, որ սխալ է, և կառաջացնի բացասական զգացմունքներ, արցունքներ կամ դրա նման մի բան: Եվ ես վերցնում եմ Նևիլ եղբորը և մենք միասին գնում ենք մի տեղից մյուսը և միավորում ենք մարդկանց, մինչև որ այս հին խորանը նորից ոտքի կանգնի, որ գնա առաջ Աստծո Թագավորության համար: Պատճառը, թե ինչի համար ես ասացի սա, այն է, որ այսօր մեր փոքրիկ խմբի հետ եք այստեղ:

17 Իսկ այժմ ես պատրաստվում եմ մի փոքր հանգստանալ և որքան հնարավոր է արագ վերադառնալ: Հետո հուսով եմ նորից մեկնել ավետարանչության դաշտ: Եվ այս անգամ, եթե Տերը կամենա, ուզում եմ վերցնել այն,

ինչ մենք մի քիչ հավաքել ենք ֆոնդերում և այլն, ես ինքս … արտասահմանյան այս միսիոներական ծրագրի համար: Նաև ինձ համար նոր վրան ու նոր սարքավորումներ եմ ձեռք բերելու և մեկնելու եմ ավետարանչական արշավների: Ոչ թե եկեղեցուց եկեղեցի, այլ գնալու ենք մեր սեփական հավաքույթներով:

18 Հիմա, ես դա չեմ ասում արհամարելու համար եղբայրներին, ովքեր հրավիրել են ինձ, ինչը հրաշալի է: Բայց շատ դեպքերում այս համաժողովներին հայտաբերում ես, նրանք ասում են, որ դու պիտի լինես այնտեղ, գալիս են քո բոլոր ընկերները, իսկ հետո այնտեղ սկսվում է մի մեծ ամբողջ դրամահավաք: Այդ մարդիկ պարզապես մնում են առանց կոպեկի: Ես նոր եմ սկսել դա հայտնաբերել, հասկանում եք: Ուստի դա, դա ճիշտ չէ: Մենք ուզում ենք մի տեղ ունենալ, որտեղ կկարողանանք հավաքել նրանց: Ձեր փողերը բերելու կարիք չկա: Պարզապես ինքներդ եկեք և, և ծառայեք Տիրոջը: Հասկանո՞ւմ եք: Եվ այսպես, հիմա…

19 Հենց հիմա իմ ծառայության մեջ փոփոխություն է տեղի ունենում: Դուք հիշում եք, թե ինչպես էի բռնում մարդու ձեռքը և պարզապես կանգնում էի այնտեղ ու Տերն ինձ ասում էր, թե ինչ խնդիր ունի նա: Ասաց. «Հետո կլինի այնպես, որ դու կիմանաս մարդկանց սրտի գաղտնիքները»: Բոլորդ էլ գիտեք, որ դա կատարվեց ճշգրիտ կերպով այնպես, ինչպես ասվել էր: Հիմա նախատեսվում է հաջորդ քայլը, որի մասին մարգարեություն է եղել և կանխասվել է, որն Այս ամենից վեր է լինելու, հասկանում եք: Եվ հիմա սա փոփոխման մեջ է:

20 Դրա համար է սատանան պայքարում ինձ հետ եկամտահարկի միջոցով, փորձելով ասել ինձ, կառավարությանը, որ ես՝ որպես սպասավոր, քսանյոթ տարիների ընթացքում, ինչ մտել եմ ծառայության մեջ, յուրաքանչյուր ստացած պենիի համար պետք է եկամտահարկ վճառեմ: Դա այդպես չէ, որովհետև այն անցել է այս եկեղեցու միջով:

21 Ես այս եկեղեցու հոգաբարձուն եմ: Դա միանգամայն ճիշտ է: Սա կա այստեղ՝ փաստաթղթերում: Հետևաբար, եթե ես այս եկեղեցու հոգաբարձու–գանձապահն եմ, ուրեմն աշխարհում ոչինչ…Կառավարությունը դրա հետ ոչ մի կապ չունի: Նրանք ոչ թե եկեղեցուց այլ ինձանից են՝ որպես եկեղեցու գանձապահ, հաշիվ

պահանջում: Հոգաբարձուները բանկում ստորագրել են փաստաթուղթ, որ իմ բոլոր դրամամիջոցները...Իմ սեփական հիմնադրամն ունենալու փոխարեն, ես այն անցկացրել եմ այստեղ՝ իմ եկեղեցով, որովհետև սա ամեն դեպքում ավտոմատ կերպով հիմնադրամ է:

22 Եվ այդ գործն օգնում է ինձ չթողնել եկեղեցին և չլքել այն, չմեկնել և ամբողջությամբ չբացակայել այստեղից: Այն բանից հետո, երբ ես խոստացա մարդկանց, որ ժամանակ առ ժամանակ կվերադառնամ եկեղեցի և կօգնեմ նրանց: Դրա համար էի ես գործն այդպես վարում, որովհետև խոստացել էի ձեզ: Դրա համար էի ես այդպես մնում դրա հետ, անհատական բան ունենալու փոխարեն: Եթե անում ես դա, ապա դա եկեղեցին գցում է կազմակերպության մեջ: Իսկ ես կտրականապես դեմ եմ կազմակերպությանը: Դրա համար ես, ես պարզապես թողնում եմ դա այնպես, ինչպես կա՝ Աստծո ձեռքերի մեջ, որպեսզի կարողանանք առաջ շարժվել Աստծո թագավորության համար:

23 Հիմա, այսօր մենք ուզում ենք ուսումնասիրել այս հին օրհնյալ Խոսքը և հավատալ:

24 Ես նաև ուզում եմ ասել...Տեսնում եմ Էգան եղբորը, ինչպես նաև շատերին, հոգեբարձուներից մի քանիսին նստած այստեղ, այն բանից հետո, երբ վերջերս մեր հոգեբարձունների հավաքույթն անցկացրինք: Սա ճշմարտություն է, հրապարակավ եկեղեցու առջև ասում եմ, որ ձեզանից յուրաքանչյուրն այլևս նշանակված հոգեբարձու չէ: Դուք ընտրված հոգեբարձուններ եք, և ձեր անունները գրված են գրքերում: Լավ:

25 Հիմա նրանք սարկավագների ևս մի ընտրություն են անցկացնելու և այլն: Եվ ծառայությունից անմիջապես հետո եղբայր Նևիլը հրավիրելու է նրանց, լավ, ինչպես նաև գանձապահին և այլն, քանի որ մենք կանոնավորում ենք եկեղեցին: Պետք է հիմնական պատրաստությունները տեսնել, այդ ժամանակ մենք կկարողանանք արթնություն ունենալ, երբ այն գա:

26 Հիմա, մինչև կենդանի Աստծո այս փառավոր Խոսքի էջերին անդրադառնալը մեր կիրակնօրյա դպրոցի դասի համար, եկե՛ք մի քանի րոպեով խոնարհենք մեր գլուխները, մինչ խոսում ենք այս Գրքի Հեղինակի հետ: Եվ հիմա մի կողմ դրե՛ք ամեն միտք, ամեն բան, ինչ հակառակ է, որը խոչընդոտում է ձեզ օրհնություն ստանալ:

Աղոթենք։

27 Ամենասուրբ և արդար Աստված, մենք հիմա գալիս ենք Քո օրհնյալ և վսեմ ներկայության մեջ, ընծայելով Քեզ մեր կյանքերը և մեր, մեր անձերը, մեր մարմինները, ծառայությունները և մեր տաղանդները։ Եվ այն ամենը, ինչ մենք ունենք ներկայացնում ենք Քեզ։ Եվ երբ Դու նայում ես մեզ, Տե՛ր, եթե որևէ մերկ կամ չխոտսովանված մեղք կա, խնդրում ենք Քեզ, ո՛վ Տեր Աստված, որ կիրառես Քո Որդու՝ Հիսուսի Արյունն այդտեղ։ Քանզի գիտակցում ենք, որ մենք ինքներս մեզանով անհամապատասխան ենք և այնտեղ անհնար է ինքնաբավ լինել։ Սակայն մենք լիովին ապավինում ենք Նրա թանկագին Արյան և Նրա շնորքին, այն կիրառելու մեր վրա, որպեսզի մենք՝ անարժան մեղավորներս մի օր կարողանանք համարձակորեն մտնել Քո ներկայության մեջ, մեր առջև բերելով Տեր Հիսուսի այս Արյունը։ Որն անցյալում ճանաչել ես, որ դա Քո միածին Որդու Արյունն է, և խոստացել ես, որ՝ Նրա միջոցով, եթե խոստովանենք մեր մեղքերը, Նրա շնորհի միջոցով կարդարանանք։

28 Եվ հիմա խնդրում ենք, Տե՛ր, որ ներես մեր բոլոր սխալները, արարքները կամ վրիպումները, հանցանքները, որ եթե որևէ չար միտք սատանայի կրակոտ նիզակով խոցել է մեր հոգին, վոնդես Քո և Քո ժողովրդի այս չար թշնամուն։

29 Նաև խնդրում ենք, որ ուղարկես Սուրբ Հոգին, որ Իր ձեռքը վերցնի այս ժամվա Խոսքը մինչ մենք հանձնում ենք մեզ որպես գործիքներ, որպեսզի Դու խոսես մեր միջոցով և լսես մեր միջոցով Քո Խոսքը։ Եվ թող ի պատասխան մենք դա ընդունենք Քեզանից, և դուրս գանք այստեղից՝ զգալով, որ մենք նորից ուղղվել ենք Քրիստոսի գործի վրա, որպեսզի ավելի լավ պատրաստվենք այսօրվա և վաղվա ծառայությունների համար Սուրբ Հոգու այցելության շնորհիվ։

30 Օրհնի՛ր մեր եղբայրներին ամենուրեք, եկեղեցիները ամբողջ աշխարհով մեկ, ովքեր ավետարանում են Կյանքի Խոսքը այս չար օրերում։ Մենք զգում ենք, որ շատ ժամանակ չի մնացել գործելու համար, որովհետև գիշերն արագ մոտենում է։ Պատերազմի ամպերը նորից լողում են։ Չարը դռան մոտ է, և մենք խնդրում ենք, որ թույլ տաս մեզ աշխատելու այնպես, ինչպես երբեք նախկինում։ Տե՛ր, հանգստություն տուր մեր հոգնած մարմիներին և մեզ նորից հետ ուղարկիր պատերազմի։ Որովհետև մենք

դա խնդրում ենք Տեր Հիսուսի Անունով և Նրա փառքի համար: Ամեն:

31 Այսօր մենք կբացենք Աստվածաշնչից Եբրայեցիս թղթի 11–րդ գլուխը:

32 Չորեքշաբթի երեկոյան մենք խոսում էինք Եբրայեցիս թղթի 7–րդ գլխից. «Մելքիսեդեկի առանց հոր, առանց մոր, առանց օրերի սկիզբի կամ կյանքի վերջի» մասին:

33 Եվ ես մտածեցի, որ այսօր գուցե տեղին կլիներ նորից բացել հրաշալի այս թուղթը, քանի որ նախորդ ընթերցանություններից մենք արդեն հիմք ունենք այն բանի, ինչի մասին ուզում ենք խոսել: Եվ բաց թողնելով 9–րդ և 10–րդ գլուխները, որտեղ խոսվում է զոհաբերության օրենքների մասին, մենք կանցնենք «հավատքի» կետին: Եվ այստեղ Եբրայեցիների թղթում, 11–րդ գլուխ, 23–րդ համարից սկսած՝ մենք կարդում ենք հետևյալը.

> *Հավատով, երբ Մովսեսը ծնվեց, երեք ամիս ծածուկ պահվեց իր ծնողների կողմից, որովհետև տեսան, թե գեղեցիկ երեխա էր և չվախեցան թագավորի հրամանից:*
>
> *Հավատով, երբ Մովսեսը մեծացավ, չկամեցավ Փարավոնի աղջկա որդին կոչվել,*
>
> *ավելի լավ համարելով Աստծո ժողովրդի հետ չարչարվե՛լ, քան կարճ ժամանակի համար մեղքի հաճույքները վայելել,*
>
> *Քրիստոսի նախատինքն ավելի մեծ հարստություն համարելով, քան Եգիպտոսի գանձերը...* և *վարձատրություն ստացավ:*
>
> *Հավատով նա Եգիպտոսը թողեց, չվախենալով թագավորի բարկությունից, ինչպես տեսնում էր Նրան, որ անտեսանելի է:*

34 Այս առավոտյան իմ քարոզի թեման է՝ «հավատքով ընտրություն կատարելը», իսկ վերնագրի համար ուզում եմ վերցնել 23–րդ գլխի առաջին երկու բառը. «*Հավատով Մովսեսը*»: Եվ «հավատով ընտրություն կատարելը», գրեթե ամեն բանում, ինչ մենք անում ենք, պետք է հավատքով ընտրենք: Եվ ամենը, ինչ մենք տեսնում ենք, որ Մովսեսն արեց, ինչն արժե կրկնել, հավատքով էր, ոչ թե երևույթով, այլ հավատքով:

35 Եվ պատճառը, թե ինչու ես այսօր ընտրեցի սա եկեղեցու համար տվյալ վիճակում այն է, որ մեր... նույնիսկ մեր դպրոցներում և ամենուր մենք գիտական ուսուցում շատ ենք ունեցել: Այս պատճառով ենք մենք մարդկանց հեռացրել հավատքից: Հիմա, հավատքը չի ապացուցվում գիտությամբ: Հավատքը հենց այն է, ինչ գիտությունը չի հասկանում: Եվ մենք...Եթե մենք երբևէ կորցնենք այս հզոր հավատքը, ամբողջությամբ կհայտնվենք խավարի մեջ, սա...կարևոր չէ, թե որքան լավ կրթված ենք մենք, թե ինչպես կարող ենք բացատրել Աստծո Խոսքը, որ համապատասխանի մեր սեփական հավատալու ձևին:

36 Աստծուն հաճեցնելու ոչ մի միջոց չկա, հավատքից բացի: Սուրբ Գիրքը պարզ ձևով հաստատում է դա, և դա այդպես է: *«Առանց հավատի,*— ասում է Սուրբ Գիրքը,— *անհնար է հաճեցնել Աստծուն»:*

37 Դրա համար եթե հավատքը հակասում է գիտությանը, իսկ գիտությունն էլ՝ հավատքին, դա իրենց դնում է միմյանց դեմ, այդժամ մենք պետք է ընտրություն կատարենք, ինչպես Մովսեսն արեց: Հավատքով ենք մենք հավատում:

38 Հիմա, եթե մենք կորցնենք հավատքը, երբեք չենք ստանա Աստծուց աղոթքի պատասխանը: *«Որովհետև Աստծուն մոտեցողը նախ պետք է հավատա, թե Աստված կա, և Նա վարձահատույց է լինում Իրեն փնտրողներին»:* Դրա հանար եթե մենք կորցնենք հավատքը, մեր աղոթքները կչեղարկվեն, մենք ոչնչի չենք հասնի:

39 Դրա համար այն ամենը, ինչի մասին մենք կարող ենք մտածել այսօր, հավատքից կառչելն է: Որովհետև եթե մենք կորցնենք հավատքը, մեր բոլոր հույսերը կմարեն: Եվ եթե մենք կորցնենք հավատքը, մեր ողջ հոգևոր իրականությունը կանհետանա: Որովհետև չես կարող հավատք ունենալ այն բաների նկատմամբ, որոնք տեսնում ես, որովհետև այն, ինչ տեսնում ենք՝ ամենն անցողիկ է:

40 Եթե մենք նայում ենք մի մեծ մարդու, հզոր ծառայողի կամ մեծ ժողովի, նրանք բոլորը մի օր կանհետանան: Եվ եթե մենք նայենք հզոր ազգերին կամ հզոր զենքերին, դրանք բոլորը մի օր կանհետանա: Հետևաբար մենք պետք է հավատքով ապրենք այն բաներով որոնք գիտությունը չի հայտարարում: Հավատքով է, որ մենք հավատում ենք:

41 Հիմա, մենք կկորցնենք մեր փառքը, եթե կորցնենք հավատքը: Հիմա, եթե մենք հեռանում ենք հավատքից, ապա եկեղեցին գցում ենք ինտելեկտուալ ոլորտի մեջ:

42 Եվ շատ հաճախ մարդկանց շրջանում տարածված է այս կարծիքը, որ քանի որ հավաքը մեծ էր և նրանք հսկայական եկեղեցիներ ունեին, մեծ գմբեթներ, շատ լավ հագնված ու խնամված մարդիկ, և մեծ ֆինանսներ, որ կարողանում են նման բաներ իրենց թույլ տալ, մենք շատ անգամ մտածել ենք, որ դա ոգեշնչող է, որ տվյալ եկեղեցին պետք է որ ոգեշնչված լինի: Կամ շատ հաճախ վկայակոչել ենք տարբեր ծառայողներին, ովքեր դուրս են գալիս ավետարանչական դաշտ և մարդկանց մեծ ամբոխներ են հավաքում, և երբեմն մենք կարծում ենք, որ դրանք ոգեշնչման նշաններ են: Բայց դա ամենևին էլ այդպես չէ: Դա մարդկային ոգեշնչում է:

43 Բայց իսկական ոգեշնչումը գալիս է Աստծո կամքը կատարելով: Հասկանո՞ւմ եք: Լինի դա մեկ, թե ընդամենը մի բուռ: Լինի դա մեծ կամ փոքր եկեղեցի, կարևոր չէ: Լինի դա հզոր պերճախոս, կամ պարզապես մի մարդ, ով հազիվ թե գիտի այբուբենը, կարևոր չէ: Դա կախված է այն պատգամից, որ տվյալ անձը բերում է, թե արդյոք այն ոգեշնչվա՞ծ է Աստծո Խոսքով, կամ, թե ոգեշնչված է մարդկային ոգեշնչման ինտելեկտուալ գաղափարներով:

44 Ոմանք կարող են ոգեշնչվել պերճախոս խոսողից: Դա դեռ ոչինչ չի նշանակում: Երբեմն նրանք ոգեշնչվում են, որովհետև տվյալ մարդը այնքան վարժված է, որ կարողանում է լավ շարադրել իր միտքը: Սա չի նշանակում, որ դա Աստծուց է: Հասկանո՞ւմ եք:

45 Միայն Աստծո հավերժական, հավիտենական օրհնյալ Խոսքով կարող ենք մենք ներշնչում ստանալ, իսկ դա տրվում է Սուրբ Հոգու միջոցով: Հավատքով ենք մենք դա ստանում:

46 Եկե՛ք մտածենք Մովսեսի և նրա կյանքի փառավոր պահերի մասին: Մենք կարդում ենք նրա ծննդյան մասին, և այն մասին, թե ինչպես էր Աստված հոգ տանում նրա համար, բայց նրա կյանքում եկավ մի պահ, երբ պետք է ընտրություն կատարվեր: Եթե մենք ճիշտ ենք կարդում, ապա տեսնում ենք, որ նա Փարավոնի դստեր որդին էր ու գահի ժառանգորդ, և հաջորդ Փարավոնը Եգիպտոսում ինքն էր դառնալու: Այսպիսով, երբ նա իր շուրջը նայեց, ուշադրություն չդարձրեց, երբ դարձել էր հասուն և պատասխանատու, լորձի փոսերում աշխատող այն

ստրուկների վրա։ Եվ Մովսեսը պալատի պատուհանից նայում էր այդ նույն ստրուկներին, որոնց փարավոնն էր նայում, բայց ինչ տարբերություն կար այդ հայացքի մեջ։

47 Մի քանի րոպեյով ես ուզում եմ հիմնել այս մտքը, և թող երկնքի Աստվածը հասցնի դա այստեղ գտնվող յուրաքանչյուր սրտին։ Ամբողջ տարբերությունը նրանում է, թե ինչպես ես նայում ամենին։

48 Հզոր ավետարանիչ՝ Ջոն Սփրուլը, ով դարձի էր եկել Բոսվորդ եղբոր ծառայության արդյունքում, ում ձեզանից շատերը հիշում են հին փառքի գոմից։ Նա ասում էր, որ մի օր ճամփորդության էր մեկնել, նախքան իր սիրելի ընկերակցուհու և կնոջ վախճանվելը։ Նրանք Լա Սալլեում էին՝ Ֆրանսիայի Լորեն քաղաքում։ Ես էլ եմ առանձնաշնորհում ունեցել այցելելու այդ նույն վայրը։ Ուղեկցորդը տանում է նրանց պարտեզների միջով և տարբեր բաներ է ցույց տալիս։ Նրանք հանդիպեցին Տեր Հիսուսի խաչված արձանին։ Եվ Պարոն Սպրոլը, ինքն ու կինը հեռվում կանգնել և նայում էին դրան՝ իրենց սրտում քննադատելով այն, թե տվյալ նկարչի, ավելի ճիշտ՝ քանդակագործի մտքում ինչ է եղել, երբ քարից քանդակել է նման սարսափելի բան, որը պետք է ներկայացնի Տեր Հիսուսի չարչարանքն ու սերը և կարեկծանքը, և ինչպիսի անմշակ ու դաժան տեսք ուներ այդ ամենը։ Այդ պահին ուղեկցորդը մոտենում է պարոն Սպրոլին և ասում է. «Սըր, ենթադրում եմ, որ դուք քննադատում եք Տեր Հիսուսի այս արձանը»։

Նա պատասխանեց. «Այո»։

49 Եվ նա ասում է. «Ես ամենևին էլ զարմացած չեմ, որովհետև շատերը, երբ նայում են դրան, սկզբում քնադատում են»։

50 Պարոն Սպրոլն ասաց. «Բայց նման բանին նայելով ես որևէ կարեկցանք կամ ոգեշնչում չեմ տեսնում, դրա համար զարմանում եմ, թե ինչու է քանդակագործն այդպես քանդակել»։

51 «Եվ քանդակագործը...»։ Ասում է. «Պարոն Սպրոլ, այս արձանի հետ ամեն ինչ կարգին է, քանդակագործն էլ ճիշտ բան է ունեցել իր գլխում։ Բայց խնդիրը ձեր մեջ է։ Կարևոր է, թե ինչպես եք դրան նայում»։ Եվ նա բռնեց այդ մարդու և իր կնոջ ձեռքից և տարավ նրանց այս խաչի խորանի ստորոտին։ Եվ նա ասաց. «Պարոն Սպրոլ, հիմա նայե՛ք վեր»։ Եվ երբ նա աչքերը վեր բարձրացրեց,

ասաց, որ սիրտը քիչ էր մնում կանգ առներ։ Ի՜նչ մեծ տարբերություն էր կանգնել հեռվում և նայել դրան *այդ* ձևով, և իջնել ու նայել դրան այնպես, ինչպես որ այն ստեղծված էր նայելու համար։

52 Աստծո պարագայում էլ նույնն է։ Հավատքի պարագայում էլ նույնն է։ Կարևոր է, թե ինչպես եք դրան նայում։ Եթե դրան նայում եք որպես ինչ-որ պատմական Աստվածաշունչի՝ մի բանի, որ եղել է անցած օրերում, ուրեմն Աստվածաշնչի իրական արժեքը երբեք չեք կարողանա հասկանալ։ Պետք է ծնկի գաք և հնազանդվեք այս Աստվածաշնչի պատվիրաններին և նայեք Դրան Սուրբ Հոգու աչքերով։

53 Ես այսօր ուզում եմ հարցնել այս լսարանին։ Ի՞նչ օգուտ կլիներ մեզ այսօր պատմական մի Աստծուց, եթե Նա նույն Աստվածը չէ։ Ի՞նչ օգուտ մի Աստծուց, ով վերցրեց Մովսեսին և իր միջոցով կատարեց այն հրաշքները, որոնք նա արեց, ի՞նչ օգուտ մեզ այդպիսի Աստծո մասին կարդալուց, եթե Նա նույնը չէ այսօր։ Ի՞նչ օգուտ մի Աստծուց, ով կարողացավ ազատել եբրայեցի երեխաներին կրակե հնոցից, եթե Նա նույն Աստվածը չէ այսօր։ Ի՞նչ օգուտ մի Աստծուց, ով անցյալում դատում էր ճշտի և սխալի միջև՝ պատժում էր սխալը և օրհնում էր ճիշտը, եթե Նա նույն Աստվածը չէ։ Ինչի՞ համար ենք մենք գնում եկեղեցի։ Ինչո՞ւ ենք մենք մեզ զերծ պահում աշխարհիկ բաներից, եթե Նա նույն դատաստանի և նույն և կարծիքի նույն Աստվածը չէ, որ միշտ եղել է։ Ի՞նչ օգուտ կլիներ մի Աստծուց, Ով կարողացավ դիպչել տենդ ունեցող կնոջ ձեռքին, և ջերմը թողեց նրան, եթե Նա նույն Աստվածը չէ այսօր։ Ի՞նչ օգուտ կլիներ ծառայել մի Աստծուն, ով կարողացավ Իր ընկերոջը գերեզմանից կանչել, չորս օր մեռած լինելուց հետո, եթե Նա նույն Աստվածը չէ այսօր։

54 Հավատքով մենք հավատում ենք, որ փառավոր մի օր Նա կկանչի մեզ այս երկրից, նույնիսկ եթե մենք նորից մի գդալ մոխիր դարձած լինենք։ Մենք ինչպե՞ս ենք դա ապացուցում։ Մենք դա չենք ապացուցում։ Մենք դրան հավատում ենք։ Մեզ չեն խնդրում որ մենք ինչ-որ բան ապացուցենք։ Մեզ պատվիրվել է դրան հավատալ։

55 Հավատքով Մովսեսն *այս և այն* բաներն արեց։ Եվ երբ Մովսեսը՝ երիտասարդ լինելով, նայում էր պալատի պատուհանից ստրուկների վրա, նա տեսնում էր նույն

մրոտ, կեղտոտ, ցեխոտ ստրուկների մի փունջ, ինչ որ փարավոնն էր տեսնում:

56 Եվ երբ փարավոնն ու եգիպտացիները նայում էին նրանց, նրանք ոչ այլ ինչ, քան ստրուկների մի խումբ էին: Միայն դրա համար էին նրանք պիտանի՝ ցեխ շաղախող մարդիկ, որ աղյուսներ պատրաստեն քաղաքի համար, որ փարավոնն էր կառուցում: Այդպես էին եգիպտացիներն ու փարավոնը նայում ստրուկներին:

57 Բայց երբ Մովսեսն էր նայում նրանց, դա մի այլ տեսակի հայացք էր, որ Մովսեսն ուներ: Երբ նա պատուհանի կողքով անցնելիս տեսնում էր, մեծ սպիները նրանց դեմքներին, արցունքները, որ հոսում էին իրենց այտերով և իրենց կորացած մարմինները, նա նայում էր նրանց, որպես Աստծո ժողովրդի: Ինքը չէր նայում նրանց որպես ստրուկների: Նա նայում էր նրանց վրա որպես Աստծո ընտրված ժողովրդի:

58 Ո՛հ, երբ ես շրջում եմ երկրից երկիր, ազգից ազգ քարոզելով, այն ժամանակվանից, երբ ես թողել եմ այս փոքրիկ խորանի դռները, որը միջհարանվանական հաստատություն է, որտեղ ոչ մի օրենք չկա, սիրուց բացի, ոչ մի գիրք՝ Աստվածաշնչից բացի և ոչ մի հավատամք՝ Քրիստոսից բացի, ես միշտ փորձել եմ նայել Աստծո զավակների և մերժվածների վրա որպես Աստծո ընտրված և ընտրյալ ժողովուրդ: Ես չեմ հարցնում նրանց, թե արդյոք նրանք պատկանում են Բրանհամի խորանին: Ես չեմ հարցնում նրանց՝ արդյոք նրանք մեթոդականներ են կամ, թե արդյոք երիցականներ, կամ հոգեգալստականներ, կամ ուխրավորներ կամ էլ սրբության ուխտավորներ են: Ես պարզապես ուզում եմ նայել նրանց որպես Աստծո ժողովուրդ: Եվ տեսնելով նրանց գործերն ու արարքները, որ իրենք Տեր Աստծո ծառաներն են, իմ սիրտը փափագում է հաղորդակցվել նրանց հետ, նշանակություն չունի, թե ինչ պիտակ ունեն նրանք: Ես պարզապես փափագում եմ նրանց հետ հաղորդակցվելուն: Ես սիրում եմ նրանց, որովհետև գիտեմ, որ նրանք Աստծո ժողովուրդն են:

59 Երբ ես տեսնում եմ, թե ինչպես է մի կին երկար շրջազգեստով, հետևից կոկիկ հավաքած մազերով և, և վայելուչ հագուստով քայլում փողոցով, ու տեսնում եմ մեկ այլ երիտասարդ կնոջը, գուցե նույն տարիքի, կատճատաբը հագին. աշխարհի տեսանկյունից գուցե նա տեսքով երկու անգամ ավելի գեղեցիկ է, քան առաջինը,

բայց ես ընդունում եմ քրիստոնյայի պես հագնված այդ աղջկա կողմը: Նույնիսկ եթե նրանք ծիծաղեն և ֆանատիկ անվանեն նրան, այնուհանդերձ ես նրա կողմը կպահեմ: Արտաքնապես գուցե նա այնքան էլ գեղեցիկ չէ, որքան մյուս աղջիկը, բայց նա ինչ-որ բան է տեսնում: Հավատով նա տեսնում է Նրան, Ով անտեսանելի է, Ով ուղորդում է իր կյանքը:

60 Երբ ես գործի տեղը տեսնում եմ մի մարդու, ով «սարկավագ», կամ «քարոզիչ», կամ էլ «ֆանատիկ» է կոչվում, որովհետև հրաժարվում է ծխելուց, գարեջուր խմելուց, պարի գնալուց, մյուսների նման, և «ֆանատիկ» է կոչվում, իմ սիրտը գնում է նրա հետևից: Նա իմ եղբայրն է այս եգիտական հողում, ինչն մեր սիրտը մղում է գրկել նրան և ասել. «Եղբա՛յր, մենք այս երկրի պանդուխտներն ու օտարներն ենք, և ես փափագում են հաղորդակցվել քեզ հետ»:

Մովսեսը պետք է ընտրություն կատարեր, ընտրություն հավատքով:

61 Քանի՞ երիտասարդներ կկառչեին փարավոնի դստեր որդին լինելու հնարավորությունից: Քա՞նի երիտասարդներ կկառչեին Մովսեսն ունեցած հնարավորությունից, որ վայելեն այս աշխարհի ողջ հաճույքներն ու շքեղությունը, որ Եգիպտոսի թագավոր դառնան, որ ողջ աշխարհը լինի իրենց ոտքերի տակ: «Ինչ հիմարություն»,— կմտածեին իր օրերի երիտասարդները, երբ Մովսեսը ընտրեց զբաղեցնել իր տեղը Աստծո տանջված և չարչարված ժողովուրդի շարքերում:

62 Ինչո՞ւ նա արեց դա: Հավատքով, երբ նա բարձրացրեց իր աչքերը, նայեց այս աշխարհի հմայքից այն կողմ: Նա նայեց մեղքի հաճույքներից այն կողմ: Աստվածաշունչն ասում է, որ նա համբերեց, հավատքով Անտեսանելուն տեսնելով, և ընտրություն կատարեց ծառայել այդ Աստծուն, անկախ այն բանից, թե ինչ էր կատարվում:

63 Սա չի փոխվել: Մեզանից շատերը կարող էին գնալ, ինչպես մենք կասեինք, ավելի լավ կառույցներ: Գուցե մենք կարողանայինք վայելել հաղորդակցությունն ու հաճույքները ավելի լավ նստարաններին նստելով: Մենք կարող էինք ավելի հայտնի լինել ծխելով, խմելով, հագնվելով և աշխարհիկների նման վարվելով: Բայց ինչո՞ւմ է խնդիրը: Դուք բարձրացրիք ձեր աչքերը և հավատքով տեսնում եք Նրան, Ով անտեսանելի է, և կանգնեցիք մերժվածների և տվյալ օրվա, այսպես կոչված,

«սուրբ թռչկոտողների» հետ: Որովհետև հավատքով մենք տեսնում ենք Նրան, Ով անտեսանելի է՝ ընտրելով հալածանքներ և չարչարանքներ կրելը:

64 Ես չեմ ասում մարդկանց, որ նրանք պետք է ընտրեն չարչարանքը: Ես չեմ ասում, որ դուք պետք է ընտրեք տառապանքը: Դա անմարդկային կլիներ: Բայց եթե տառապանքը գտնվում է պարտականությունը կատարելու ճանապարհին, ուրեմն ընդունենք դա, երբ այն գալիս է: Ես չեմ ուզում, որ դուք անեք մի բան, ինչի պատճառով կծաղրեն ձեզ: Ես չէի ուզենա, որ դուք տարբեր բաներ ասեք, որ՝ «Ես…ես պատկանում եմ մի եկեղեցու, ով չի հավատում *այս և այն* բաներին, աշխարհում, և նման բաներ», ինչի պատչճառով մարդիկ ձեզ կծաղրեն: Դուք ինքներդ եք դա բերում ձեր վրա: Ես չեմ ասում, որ դուրս գաք այստեղից և որևէ ծայրահեղ բան անեք: Ես չեմ ուզում, որ դուք դա անեք, ինչի պատճառով ձեզ ֆանատիկ անվանեն: Դուք ինքներդ եք բերում դա: Բայց եթե դա գտնվում է Աստծո առջև ձեր պարտքը կատարելու ճանապարհին, թող աշխարհն ասի ինչ ուզում է: Շարունակեք այդպես:

Դուք ընտրություն եք կատարում: Ամեն տղամարդ և ամեն կին պետք է սա անի:

65 Ի՞նչ կլիներ, եթե փարավոնը տեսներ այն, ինչ տեսավ Մովսեսը: Նա տեսնում էր ժողովրդի չարչարանքները: Նա գիտեր, թե ինչ գին պետք է վճարվեր: Բայց հավատքով նա գերադասեց դա, քան ունենալ մեղքի հաճույքները:

66 Գուցե այնտեղ երիտասարդ լեդիներ են նստած, հմայիչ երիտասարդ կանայք: Աշխարհն ուզում է ձեզ ասել. *«Այս և այն բանն* արա՛: Դու գեղեցիկ ես: Դու այնքան գեղեցիկ կազմվածք ունես: Պետք է այն ցույց տաս»:

67 Բայց, քո՛ւյրս, բարձրացրու աչքերդ և նայիր դրանից այն կողմ, Նրան, ով ասել է. «Կնոջ համար գարշելի է տղամարդու համար նախատեսված հագուստ հագնելը»:

68 Եթե ձեր համայնքի տղամարդիկ, եթե կանայք, որոնց հետ դուք շփվում եք, ասել են՝ «Կտրիր այդ երկար մազերը: Այդպես ավելի հով կլինի: *Այսպես, այդպես* կամ *այնպես* կլինի»: Կամ՝ «Դա քեզ ավելի շատ կսազի»: Մի՛ լսեք դրան:

69 Բարձրացրեք ձեր աչքերը և հավատքով տեսեք Նրան Ով ասել է. «Կնոջ մազերը նրա փառքն է, և նա չպետք է

կտրի դրանք»:

70 Եթե նրանք ասում են. «Դա ավելի հանրաճանաչ կլինի: Դու ավելի լավ հարաբերությունների մեջ կլինես գործի տեղում, կամ տնօրենիդ հետ, եթե խմես հասարակական վայրերում: Եթե մյուս կանանց նման դու էլ ծխես, ավելի լավ հասարակական դիրք կունենաս քո հարևանության մեջ»:

71 Հավատքով բարձրացրե՛ք ձեր աչքերը և նայե՛ք Նրան, Ով ասաց. «Մարմինն ապականողին Ես կկործանեմ»: Հավատքով մենք հավատում ենք այդ բաներին: Դա այն չէ, ինչը դուք տեսնում եք: Դա մի բան է, ինչին դուք հավատում եք: Հավատքով Մովսեսն արեց դա:

72 Եվ հավատքի մեջ քայլելու ընդացքում գալիս է մի պահ, երբ պետք է ընտրություն արվի:

73 Ղովտը կատարեց այս ցավալի սխալը, որը մենք էլ ենք անում: Շատ անգամներ մենք ընտրում ենք մեր սեփական օգտին: Ընտրում ենք այն, ինչ ավելի լավ կլիներ:

74 Երբեմն եթե եկեղեցում փոքրիկ վեճ է լինում, և ինչ-որ մեկն ասում է. «Դե, սարկավագը կամ հովիվը այս կողմն է բռնել»: Մի՛ նայեք դրան: Նայե՛ք այն բանին, ինչն արդար է: Ազատվեք այդ բաներից և հաշտեցրեք նրանց: Դա է աստվածահաճո:

75 Կա ընտրություն: Եվ մենք ինքներս մեր համար ենք ընտրում: Մենք ընտրում ենք մի բան, որը մեր սեփական օգտի համար է լավ:

76 Բայց Մովսեսը ընտրեց չարչարանքներն ու անպատվությունը, որ կարողանա քայլել Աստծո ժողովուրդի հետ: Մտածե՛ք հիմա այդ մասին: Լսե՛ք սա: «Ընտրեց Աստծո ժողովուրդի չարչարանքները և դա ավելի մեծ հարստություն համարեց, որովհետև համբերեց տեսնելով Անտեսանելիին»:

Հիմա, մի անգամ Ղովտը պետք է ընտրություն կատարեր:

77 Եվ այսօր կարող է այստեղ նստած լինեն տղամարդիկ և կանայք, ովքեր կատարելու են իրենց վերջնական ընտրությունը: Դուք այսօր այն եք, ինչ կաք, որովհետև մի քանի տարի առաջ ընտրել եք լինել այն, ինչ հիմա եք: Եվ այն, ինչ դուք ընտրում եք հիմա, ցույց կտա թե ինչ կդառնաք հինգ տարի հետո: Հինգ տարի հետո դուք կարող է միսիոներ դառնաք: Հինգ տարի հետո դուք կարող է հայտնի քրիստոնյա դառնաք:

78 Կամ հինգ տարի հետո դուք կարող է դժոխքում հայտնվեք սխալ որոշում կայացնելու պատճառով: Հինգ տարի հետո դուք կարող է բարում թքամաններ մաքրեք: Հինգ տարի հետո դուք կարող է փողոցային մարմնավաճառուհի դառնաք:

79 Կամ դուք կարող եք լինել տղամարդ կամ կին, ով, ով պատվաբեր է ցանկացած հասարակության համար՝ Քրիստոսի համար ձեր ընտրության պատճառով: Հինգ տարի հետո դուք կարող է Փառքի մեջ լինեք, գնացած հափշտակության մեջ, որովհետև այսօր կատարել եք ձեր ընտրությունը:

80 Բայց դուք պետք է ընտրություն կատարեք: Մի՛ նայեք այն բաներին, ինչ ձեր աչքերն են տեսնում: Ընտրեք այն, ինչ տեսնում եք հավատքով: Միակ բանը, որ հաշվի է առնվելու, հավատքով կատարած ընտրությունն է:

81 Ղովտը, երբ նա պետք է ընտրություն կատարեր, Ամբահամը Ղովտին տվեց ընտրության հնարավորությունը:

82 Աստված էլ տալիս է ձեզ ձեր ընտրությունը: «Այսօր ընտրե՛ք, թե ում եք ծառայելու»: Եդեմի պարտեղում կար գիտության ծառը և Կյանքի Ծառը: Մարդուն արտոնություն էր տրված ընտրելու դրանցից մեկը, որը որը կցանկանար: Նույնն էլ այսօր է: Ձեզ առանձնաշնորհում է տրված՝ որպես ազատ բարոյական մարդ, ընտրելու այն, ինչ ուզում եք:

83 Իմ խորհուրդն է ձեզ՝ մի՛ նայեք ձեր շուրջ եղող ժամանակակից բաներին, հայտնի դառնալուն և շքեղությանը, որ կարող էիք ունենալ: Բայց ավելի լավ է հավատքով ընտրեք Նրան, Ով խոստում է տալիս, որ մի օր կգա և կուղղի է բոլոր սխալները և հավիտենական կյանք կտա ձեզ ու կհարուցանի: Կարևոր չէ՝ եթե դուք ընտրեք անարգված ճանապարհը Տիրոջ փոքր խմբի հետ, արե՛ք այդ ընտրությունը: Եթե շուրջ բոլորը խնդիրներ են, եթե երկրում խնդիրներ են, եթե եկեղեցում խնդիրներ են, եթե տանը խնդիրներ են, որտեղ էլ որ լինի, կատարե՛ք ձեր ընտրությունը. «Հավատքով ես կծառայեմ Տիրոջը; Ես կխոնարհեցնեմ իմ սիրտը Նրա ներկայության մեջ: Ես կընտրեմ իմ ճանապարհը Աստծո զավակների հետ: Ես տեսնում եմ, որ նրանք արհամարհված ու մերժված են, վտարված ու ծաղրված, այնուհանդերձ ես կընտրեմ իմ դիրքը; Ես հավատարիմ կմնամ: Եվ երբ նրանք լաց են լինում, ես էլ լաց կլինեմ նրանց հետ: Երբ վշտանում են, ես

էլ կվշտանամ նրանց հետ: Ես էլ կապրեմ այնպես, ինչպես ապրում են նրանք:

84 Ինչպես Նոեմին ասաց...Ավելի ճիշտ՝ Հռութն ասաց Նոեմիին. «Քո ճանապարհները կլինեն իմ ճանապարհները: Իմ ճանապարհներն էլ քո ճանապարհները: Որտեղ դու ապրես, այնտեղ ես կապրեմ: Որտեղ որ դու գնաս, ես էլ կգնամ: Աստված, որին դու ծառայում ես, կլինի իմ Աստվածը»: Կատարե՛ք այդ ընտրությունը, նույնիսկ եթե դա ձեր խղճմտանքի և մտածողության կաշին կքերթի, որ դուք ինչ որ բան եք ներկայացնում ձեզանից; Քերթե՛ք ձեզ կաշին և ընտրեք ձեր ճանապարհը Տիրոջ արհամարհվածների փոքր խմբի հետ, և հավատարիմ մնացեք ծառայողական դաշտում և դիրքում:

85 Ղովտը նայեց շուրջը: Նա ասաց. «Ես ընտրություն ունեմ»: Եվ նայեց Սոդոմի ուղությամբ: Նա տեսավ, որ այդ խոտավետ արոտներն ավելի լավն էին, քան այն, ինչ Աբրահամն էր տեսնում, և որտեղ որ վերջինս էր գտնվում: Նա տեսավ իր անասուններին արածացնելու հնարավորությունները՝ ավելի գեր և ավելի լավ անասուններ ունենալու համար:

86 Հուսով եմ՝ չեմ վիրավորում որևէ մեկիդ զգացմունքները: Սակայն դա շատ ու շատ քարոզիչների դիրքն է եղել՝ Ավետարանի հետ փոխզիջման գնալը, մտածելով, որ նրանք դրանից ավելի շատ փող կվաստակեն: Կերակրի կտրոն: Ավելի լավ է ես անպտղաբեր երկրում ապրեմ, ուտեմ, խմեմ առվակից, չորաբլիթներ ուտեմ, քան փոխզիջման գնամ կենդանի Աստծո Խոսքի հանդեպ իմ հավատքի համոզմունքների հետ: Ես կընտրեմ իմ ճանապարհը:

87 Նրանցից ոմանք ասում էին. «Բիլլի՛, ինչ է կատարվում քո հավաքույթների հետ, քանի որ այնտեղ չափազանց շատ հիսունականներ կան»: Հայտնի հարանվանական մի ծառայողն ասաց դա:

Ես ասացի. «Ձեր հարանվանությունը կհովանավորի՞ իմ հավաքույթները»:

88 Ոչ շատ վաղուց մի հոդված էր, կարծեմ *«Լույք»* ամսագրում էր: Եվ գրողն այնտեղ ասում էր, խոսում էր հոգեգալստականների մասին: Նա ասաց. «Հոգեգալստական եկեղեցին այսօր աշխարհում ամենաարագ աճող եկեղեցին է»: Ինչո՞ւ: Որովհետև

տղամարդիկ և կանայք բարձրացրին իրենց աչքերը և նայեցին հեռուն։

89 Եվ գրողը հաճոյախոսում էր հագեգալստականներին։ Ո՛հ, իհարկե, նա ասում է. «Նրանցից ոմանք ընկնում են ծայրահեղությունների մեջ և նման բաներ։ Բայց մեթոդիստները պաշտում են դավանանքը։ Նրանք երկրպագում են Աստծուն հավատո դավանանքի համաձայն։ Մկրտականներն ու երիցականներնը նույն բանն են անում։ Բայց հոգեգալստականները երկրպագում են Իր Աստվածաշնչի համաձայն»։

90 Հավատքով ենք մենք տեսնում խոստումը։ Ես ընտրում եմ իմ բաժինը նրանց հետ, կարևոր չէ, թե որքան արհամարված են նրանք, ես դեռևս նրանցից մեկն եմ։ Նույնիսկ եթե նրանց ծաղրում են և նրանք ունեն իրենց վայրեչքներն ու վերելքները ինչպես Իսրայելը, ես երբեք չեմ ցանկանա կանգնել բլրի լանջին կեղծ մարգարեի՝ Բաղաամի հետ և փորձեմ անիծել այն, ինչ օրհնել է Աստված։ Որովհետև այդ ճամբարում զարկված Ժայռ, արյունոտ Ջոհ և Կրակե Սյուն կա։ Կարևոր չէ, թե ինչում են նրանք, դա նրանց տանում է դեպի հաղթանակ, և նրանք պիտի դրան հասնեն, որովհետև խոստացված ժողովուրդ են, ովքեր քայլում են հավատքով։ Նույնիսկ եթե նրանք հարանվանություն չեն, նրանք ամենուր թափառել են, նույնպես էլ Աստծո ժողովուրդը։ Բայց ես ուզում եմ ընտրել իմ ճանապարհը, նրանց հետ միանալ իրենց շարքին, ոչ թե նրանց հարանվանության, այլ նրանց հաղորդակցությանը Աստծո հավիտենական Հոգու պատգամների շուրջ, որոնց հավատալով ես ընդունել եմ Սուրբ Հոգով մկրտությունը։ Թող Աստված ինձ օգնական լինի, որ միշտ ունենամ այդ դիրքորոշումը։

91 Ուշադրություն դարձրեք։ Երբ նրանք առաջ էին շարժվում, մենք տեսնում ենք, որ Ղովտը տեսավ փարթամ անասուններ ունենալու հնարավորությունները։ Ծատերը տեսնում են դրամապանակը հաստացնելու հնարավորությունները։ Ծատերը տեսնում են հասարակության մեջ ավելի լավ դիրք գրավելու հնարավորությունները։ Ղովտը տեսավ հավելյալ մի քանի դոլար վաստակելու հնարավորությունները։ Տեսավ քաղաքապետ դառնալու հնարավորությունները։ Լինելով օտարերկրացի և բավականին խելացի մարդ, ինչպիսին որ նա էր. «Գուցե ես քաղաքի կարևոր մարդը դառնամ»։ Նա տեսնում էր հնարավորությունները, որովհետև

դրանք իր առջև էին: Բայց նա չտեսավ կրակը, որ կործանելու է այդ երկիրը: Նա հաշվի չարավ, որ այդ երկիրը լեցուն էր մեղքով և Աստված պետք է կործաներ այն:

92 Եվ այսօր մարդիկ փորձում են իրենց մխիթարել՝ ասելով. «Դո՞ւք...»:

Ես հարցնում եմ. «Դուք քրիստոնյա՞ եք»:

93 Նրանք պատասխանում են. «Ես ամերիկացի եմ»: Դա նույնքան կապ չունի դրա հետ, ինչքան փորձես ագռավին ասել, որ նա գորտ է: Դա դրա հետ ոչ մի կապ չունի:

94 Այն կործանվելու է, որովհետև Աստված արդար է: Իսկ եթե Ամերիկան մնա առանց պատժի, արդար, ինքնիշխան և սուրբ Աստվածը պարտավոր կլինի հարություն տա Սոդոմին ու Գոմորին և նրանցից ներողություն խնդրել իրենց մեղքի պատճառով նրանց այրելու համար, եթե Նա մեզ թողնի անպատիժ:

95 Եթե Նա ձեզ թույլ տա երկինք գնալ ձեր անարդար գործերի հիման վրա, Նա ստիպված կլինի հարություն տալ Անանիային և Սափֆիրային և ևս մեկ հնարավորություն տա իրենց: Անշուշտ, Նա պարտավոր կլինի: Բայց Ինքն արդար է: Անանիան տեսնում էր իր փողերը: Պետրոսը տեսնում էր Քրիստոսին:

96 Ո՜հ, Աստված իմ: Ղովտը չէր տեսնում իր երեխաների կործանումը այդ վայրում:

97 Այսօր ձեզանից շատերը կառչում են այս հին, ֆորմալ դավանանքներից և նման բաներից, դուք չեք տեսնում անչափահասների հանցագործությունը և ձեր երեխաների կործանումը: Դուք չեք տեսնում ձեր դստերը հասարակակաց տանը: Դուք չեք տեսնում ձեր որդու հարբեցողությունը կամ ինչ-որ տեղ թղթասեղանի շուրջ,

98 «որովհետև նա լավ ջրված է մեղքի մեջ» և չի շոշափվում: Նա չէր տեսնում իր կնոջը, բոլոր հասարակությունների ղեկավարին, աղե արձանի վերածված, երբ նայում էր: Նա չէր տեսնում, որ ինքը հրաշքով էր փրկվել՝ փախչելով ինչ-որ մի փոքրիկ քաղաք: Նա չէր տեսնում դա, որովհետև նայում էր միայն այն բանին, ինչ իր առջև էր:

99 Բայց Արբահամը՝ նա ուշադրություն չդարձրեց լավ ոռոգված երկրի վրա, որովհետև նա իր աչքերը բարձրացրեց և տեսավ վաղվա օրը, որովհետև ինքը կժառանգեր ամեն ինչ: Իսկական քրիստոնյան այսօր

բարձրացնում է իր աչքերը և տեսնում է Քրիստոսի խոստումը. *«Երանի՜ հեզերին, որովհետև նրանք ամեն բաները պիտի ժառանգեն: Նրանք երկիրը պիտի ժառանգեն»:* Իսկական քրիստոնյան հավատքով նայում է վեր և տեսնում է դա: Անվանեք նրան ոնց ուզում եք: Նա բարձրացրել է իր հայացքը: Եվ երբ նա արեց դա, Աստված ասաց. «Աբրահամ, շրջի՛ր այդ երկրով, որովհետև այն ամբողջությամբ քոնն է»: Հավատքով Աբրահամը արեց դա. նույն հավատքն էր, որ Մովսեսն ուներ:

100 Մեկնաբաններից մեկն է գրել այս խոսքերը: Կարծում եմ, որ դրանք ամենագեղեցիկ խոսքերն են: Որ Աբրա-... «Մովսեսը վերցրեց աշխարհի լավագույնը և դրեց մի կշեռքին, իսկ կրոնի վատագույնը վերցրեց և դրեց մեկ այլ կշեռքին, և կրոնի վատագույնը գերակշռեց աշխարհի լավագույնին»:

101 Նույնն էլ այսօր է, եթե մեզ կոչում են ամենով, ինչ մենք ուզում ենք կոչվել՝ «ֆանատիկներ», կամ «աստվածային բժշկողներ» կամ «սուրբ թռչկոտողներ» կամ ինչպես նրանք ուզում են կոչել, ապա վատթարագույնն ինչ մենք ունենք կգերակշռի լավագույնին, ինչ աշխարհը կարող է իրեն թույլ տալ: Դուք ուզում եք անվանվել «հնաոճ, մառախլապատ, ֆանատիկոս»: Դա կգերակշռի լավագույնին, ինչ սատանան կարող է առաջարկել ձեզ: Դա հաստատ կլինի:

102 Մովսեսը նախընտրեց Քրիստոսի նախատինքը: Նա կանխավ տեսավ Քրիստոսին: Ավելի ուշ հզոր ոգեշնչող խոսքեր ասաց Նրա մասին: «Տեսե՛ք, ձեր Տեր Աստվածն ինձ նման մի Մարգարե դուրս կբերի ձեզ համար»: Նա գիտեր: Նա կանխավ տեսել էր Նրան, և ինքը Քրիստոսի նախատինքը ավելի մեծ հարստություն համարեց, քան այս աշխարհի ողջ շքեղությունը:

103 Քրիստոնյա՛ բարեկամ, չե՞ս կարող նույնը անել: Եվ չնայած այս աշխարհի ողջ շքեղությանն ու ժողովրդականությանը, հավատքով մենք տեսնում ենք Նրան, Ով խոստում է տվել: Եվ այսօր եկեղեցու վատագույնն իր բոլոր վիճակներում, գերակշռում է այն ամենին, ինչ սատանան կարող է ձեզ առաջարկել: Նույնիսկ եթե մենք պատառոտված, մասերի ենք բաժանված, խառնաշփոթված և մասնատված ենք հարանվաննության և ֆանատիզմի մեջ, այնուհանդերձ դա գերակշռում է ցանկացած բանին, ինչ սատանան կարող է ձեզ առաջարկել: Անկասկած:

104 Մովսեսը Քրիստոսի նախատինքը ավելի մեծ հարստություն համարեց, քան Եգիպտոսի բոլոր գանձերը: Այդ ժամանակ նա պետք է մի բան աներ: Նա թողեց Եգիպտոսը: Ո՛հ, ես սիրում եմ այդ խոսքը: Նա թողեց Եգիպտոսը: Տեսե՛ք, նա նայում էր նույն պատուհանից, բայց ի տարբերություն փարավոնի նա այլ կերպ էր նայում: Իսկ ի՞նչ կլիներ, եթե փարավոնը կարողանար տեսնել իր վերջը: Ի՞նչ կլիներ, եթե փարավոնը տեսներ իր ազգի խեղդվելը: Մովսեսը դա տեսավ: Ինչպե՞ս: Գիտությամբ: Հավատքով Մովսեսը դա տեսավ: Այն, ինչ նա անում էր, հավատքով էր, որովհետև Աստված խոստացել էր Աբրահամին՝ իր հորը, որ չորս հարյուր տարի հետո Նա, Նա կայցելի այս ազգին և դուրս կբերի նրանց: Հավատքով Մովսեսը հավատաց Աստծո ասած Խոսքին, և հավատքով նա գիտեր, որ ինքը ընտրվել էր առաջնորդ՝ նրանց դուրս բերելու համար: Ինքը գիտեր, թե որտեղ էր կանգնած: Նա զբաղեցրեց իր տեղը ցեխակույտերի ցեխում որպես ցեխ շաղախող, և Քրիստոսի նախատինքը ավելի մեծ հարստություն համարեց, քան Եգիպտոսի գահին նստելը: Նա զբաղեցրեց...Ինքը երբեք չասաց. «Ես խղճում եմ նրանց»: Նա զբաղեցրեց իրենց տեղը և գնաց նրանց հետ: Փառք...Նա զբաղեցրեց իրենց տեղը: Մենք գնացել ենք նրանց հետ:

105 Զարմանալի չէ, որ ներշնչված գրողն ասել է.

> Ես ճանապարհ կգնամ Տիրոջ
> արհամարհվածների փոքր խմբի հետ,
> Ես ճամփա եմ ընկել Հիսուսի հետ, ես
> հիմա ամեն բանի միջով կանցնեմ:
>
> Ես հիմա Քանանի երկրի ճանապարհին
> եմ (Անկասկած):

106 Մովսեսը: Մեկն ասել է, որ Մովսեսը գերադասեց, երբ կարող էր փարավոնի որդին լինել և ունենալ ողջ այս աշխարհի շքեղությունը, գերադասեց Աբրահամի որդին լինել, քան փարավոնի որդին: Աբրահամի որդին՝ արհամարհվածի, քան փարավոնի որդին՝ թագավորի:

107 Ես ավելի լավ է Տեր Հիսուսի որդին և Նրա ծառան լինեմ, և զբաղեցնեմ իմ տեղը այս աշխարհի մերժվածների հետ, քան այս հզոր Ամերիկայի Միացյալ Նահանգների նախագահը լինեմ, կամ Էլվիս Պրեսլի, կամ Փեթ Բուն կամ ինչ էլ որ ուզում եք դառնալ: Ես կընտրեմ այդ ճանապարհը:

108 Երիտասարդ լեդիները պետք է ընտրեն այդ ճանապարհը: Մերի Պիկֆորդ կամ ինչ–որ հայտնի կինոաստղ, գլամուր աղջիկ դառնալու փոխարեն, ընտրեք ձեր ճանապարհը Տիրոջ արհամարվածների փոքր խմբի հետ:

109 Ես ավելի լավ է ամբիոնի հետևից քարոզիչ լինեմ՝ քարոզելով Քրիստոսի անքննելի հարստությունները, քան Հոլիվուդի կինոաստղ կամ էլ աշխարհի մեծամեծ մարդը: Նույնսիկ եթե ստիպված լինեմ խղճուկ սնվել, մուրացկանություն անել կամ ինչ էլ ստիպված լինեմ անել, ես կընտրեմ իմ ճանապարհը Տիրոջ ժողովրդի հետ: Հավատքով ես անում եմ դա: Ինձ հնարավորություններ են առաջարկվել, բայց Տիրոջ շնորհքով ես դեռևս ստանում եմ հավատքով:

Հավատքով ես կարող եմ հեռվից այն տեսնել,
Եվ մեր Հայրը սպասում է ճանապարհին,
Որ Այնտեղ մեզ համար բնակարաններ պատրաստի:

110 Վերջերս եկամտահարկի աշխատողն ասաց. «Ինչո՞ւ դու քո տունը վերածեցիր եկեղեցու: Ի՞նչը ձեզ ստիպեց քսան հինգ հազար դոլար արժողությամբ տունը տալ այդ հին փլատակված խորանին»:

111 Ես ասացի. «Ես դա ոչ թե եկեղեցու, այլ այնտեղ եղող մարդկանց համար եմ դա արել»: Ես այս աշխարհի բարիքներից ոչինչ չունեմ: Յուրաքանչյուր պենի, որը ես երբևէ վերցրել եմ, վերադարձվում է այս եկեղեցուն: Ինչո՞ւ: Իմ հավատքն ուղղված է Աստծո և ոչ թե այս աշխարհի բաների վրա: Իմ ձգտումները վերին են: Եվ ես հավատում եմ, որ ձեր բոլորի մոտ էլ նույնն է, եթե հաշտվել եք Աստծո հետ: Ճիշտ է, որ դուք էլ: Հավատքով ենք մենք ընդունում: Հավատքով ենք մենք հավատում Աստծուն:

112 Մովսեսը՝ նա պետք է ընտրություն կատարեր: Եվ հետո նա պետք է, ընտրություն կատարելուց հետո պետք է պայքարեր հավատքի համար, որովհետև նա թագավորի բարկությունից չվախեցավ: Հիմա, մարդկային տեսանկյունից նա իրավունք ուներ բարկությունից վախենալու: Նա իրավունք ուներ թագավորի բարկությունից վախենալու, բայց չվախեցավ: Նա չվախեցավ, որովհետև գործ ուներ անելու, և ինքը պարտականությունները կատարելու մեջ էր: Նրա համար

կարևոր չէր, թե թագավորն ինչ էր ասում դրա մասին: Նա միևնույնն է գնաց այդ ճանապարհով:

113 Հիմա, անշուշտ փարավոնը, երբ տեսավ, որ պարտված է, ուզեց Մովսեսին և երեխաներին տալ...Նա ասաց. «Լավ, ես ձեզ կասեմ, թե ինչ կանեմ: Դուք բոլորդ մնացեք այս երկրում, գնացեք և կատարեք ձեր Աստծո համար զոհաբերությունը»:

114 Այդպես է գործում սատանան: «Ո՛հ, դու կարող ես կրոնավոր լինել: Ինչո՞ւ դու չես գնում և միանում որևէ եկեղեցուն: Դու կարիք չունես այս բոլոր բաներն անելու»: Մի մարդ ասում է իր կնոջը...

115 Կինն ասում է. «Սիրելիս, ես փրկված եմ: Այլևս ոչ մի մանիկյուր կամ շրթներկ և նման բաներ: Այլևս ոչ մի նման բան: Ոչ մի խնջույքներ, ոչ մի հասարակական բաներ: Ես ազատվել եմ դրանից: Ես իմ ժամանակը հատկացնելու եմ Սուրբ Գրքի ընթերցանությանը և խնամք եմ տանելու տան համար»:

116 «Լսի՛ր, սիրելիս: Դու, դու կարող ես կրոնասեր լինել, լավ: Լսի՛, գնա *այնտեղ:* Դու սխալ եկեղեցի ես ընտրել»:

117 Ոչ դա այդպես չէ: Դու ճիշտ եկեղեցում ես: Եթե ունեք մի քարոզիչ, ով դա քարոզելու է ձեզ, ուրեմն պետք է մնաք դրա հետ: Քննեք դա Սուրբ Գրքով և տեսեք արդյոք դա ճիշտ է:

118 «Ո՛հ,— ասում է,— գնա *այնտեղ*: Այնտեղ նրանք, նրանք ստիպված չեն նման բաներ անելու: Հասկանո՞ւմ եք: Այնտեղ նրանք նման բաներ չեն անում»: Այդպես է... «Միայն հեռու չգնաք»: Բայց նա չի ուզում, որ դուք դուրս գաք այդ երկրից: Այդպես է անում սատանան: Նա չի ուզում, որ դուք դուրս գաք աշխարհիկ բաներից. պարզապես աշխարհն է բերում եկեղեցի:

119 Վերջերս, ճանապարհով վարելիս՝ միացրեցի ռադիոն: Երգ էր հնչում, և ես լսում էի այն, ես համարյա պետք է ամբողջ երգը լսեի, նախքան կկարողանայի ասել, թե արդյոք դա բացարձակ կրոնական երգ էր, թե դևն էր փորձում աստվածային բաներն իջնեցնել աշխարհիկ մակարդակի: Դուք չպետք է այդպես անեք: Թող Աստված ողորմի՛:

120 Ինձ չի հետաքրքրում, թե Էլվիս Փրեսլին բոլոր լավ կրոնական երգերից քանի ալբոմ է թողարկում: Նա այնուհանդերձ բռնված է դևով: Նա ավելի շատ երեխաներ է դժոխք ուղարկել, քան բոլոր ֆիլմերը, որոնց մասին ես

գիտեմ այսօր աշխարհում: Փեթ Բունը և մյուսները, նա պատկանում էր Քրիստոսի եկեղեցուն, իսկ Էլվիս Փրեսլին հոգեգալստական էր. նրանք Հուդա Իսկարիովտացիներ են այդ մարդկանց տեսքով: Սատանան փորձում է իջացնել Աստծո վերին բաները, որպեսզի նրանք կարողանան խառնել դրանք *այստեղ*՝ ներքևում: Մարդիկ չեն նայելու *սրանից* վեր: Նրանք պարզապես նայում են *այստեղ* ասում. «Դե, բոլորն էլ նույն են»: Նույնը չէ: Դուրս եկե՛ք երկրից:

121 Ասաց. «Դուք ընդամենը մի քանի օրով կարող էք գնալ: Գնացեք, բայց մնացեք այս երկրում»: Անշուշտ, նա գիտեր, որ նրանք կվերադառնան: Հետո նա տեսավ, որ դա չի աշխատի, դրա համար ուրիշ բան մտածեց: Նա ասաց. «Ես ձեզ կասեմ, թե ինչ պիտի անեք: Գնացեք ուր ուզում եք, բայց ձեր կանանց, երեխաներին և ձեր անասուններին թողեք *այստեղ:* Թողեք նրանց այստեղ և գնացեք»: Որովհետև նա գիտեր, որ նրանք այնտեղ ունեցվածք ունեն, որն իրենց հետ է ձգելու:

122 Ահա թե ինչ է սատանան ձեզ ասում: Քանի դեռ թույլ եք տալիս, որ աշխարհիկ որոշ բաները կախվեն ձեզ վրա, դեռևս ցանկանում եք ծխել, խմել, աշխահիկների նման հագնվել: Դա հենց այն է, ինչ ցանկանում է սատանան:

123 Ես հաճախ եմ լսում հավատուրացության մասին: Ես չեմ հավատում, որ այսքան շատ հավատքն ուրացողներ կան, ինչքան մարդիկ են կարծում: Նրանք պարզապես Եգիպտոսում չափազանց շատ ունեցվածք են թողել, որն էլ իրենց հետ է ձգում. ահա և վերջ: Հավատուրացությունն այն չէ, ինչ ասում են: Դուք պարզապես այնտեղ շատ բաներ եք թողել, ինչն էլ ձեզ հետ է ձգում:

124 Եղբա՛յր, ես քեզ կասեմ, երբ կեսգիշերին Իսրայելը պատրաստվեց, նրանք հավաքել էին ինչ որ ունեին այս աշխարհում և պատրաստ էին գնալու:

125 Ո՛վ Աստված, ուղարկի՛ր մեզ այդպիսի արթնություն: Մենք հավաքում ենք ամեն բան և պատրաստվում ենք հեռանալու: Կեսգիշերային աղաղակը մոտենում է. *«Դուրս եկեք Նրան դիմավորելու»:* Ավելի լավ է ամեն բան հավաքեք: Ավելի լավ է ոչինչ չունենաք այս աշխարհում, ինչը ձեզ հետ է ձգելու, ոչ մի կապող բան՝ ձեզ կապելու համար: Հավաքվե՛ք: Եկե՛ք պատրաստվենք: Մենք գնում ենք:

126 Եվ գիտե՞ք ինչ: Ես ձեզ ասեմ, նրանք այնքան հավատարիմ էին Աստծուն, որ փարավոնը կեսգիշերին այնքան էր գրգռվել, որ ասաց. «Հեռացե՛ք: Դուրս եկե՛ք և գնացե՛ք: Վերցրե՛ք ձեր իրերը և հեռացե՛ք»:

127 Ես այնքան երջանիկ եմ, որ մարդը կարողանում է Աստծուն այնքան մոտ ապրել, որ սատանան էլ չգիտի, թե ինչպես վարվել նրա հետ: Դա ճիշտ է: Հեռացե՛ք: Գնացե՛ք: Հնազանդվե՛ք Աստծուն:

128 Հավատքով նա տեսավ խոստումը: Ցեխ շաղախող կամ ոչ ցեխ շաղախող, նա ընտրեց իր ճանապարհը Տիրոջ արհամարհվածների փոքր խմբի հետ: Փարավոնն ասաց. «Վերցրե՛ք ձեր իրերը և հեռացե՛ք: Ես էլ չգիտեմ, թե ինչ անեմ ձեզ հետ»: Հավատքով նա այնքան հավատարիմ էր Աստծուն:

129 Հավատքը հրաշքներ կգործի, եթե հավատարիմ մնաք Աստծուն: Հավատքով մենք տեսնում ենք Նրան:

Մեր ժամանակը սպառվեց, երկար խոսեցինք:

130 Բայց հավատքով այս առավոտ բարձրացրե՛ք ձեր աչքերը: Մի՛ նայեք, թե ինչ կա ձեր շուրջը, այս ժամանակակից աշխարհին, այլ նայե՛ք և տեսե՛ք Նրան, Ով խոստում է տալիս: Աստվածաշունչն ասում է. «Մենք հիմա ամեն բան կատարելության մեջ չենք տեսնում, բայց մենք տեսնում ենք Հիսուսին»: Ձեր հայացքն այս առավոտ ուղղեք Նրան և ձեր ճանապարհները կփոխվեն:

131 Մինչ մի պահ խոնարհում ենք մեր գլուխները աղոթքի համար: Թող Տերն ավելացնի Իր օրհնությունները Պատգամին:

132 Մտացե՛ք հիմա ձեր սրտում: Արդյոք ձեր հայացքն ուղղա՞ծ եք եղել աշխարհիկ բաներին: Արդյոք հավատքով տեսնո՞ւմ եք Հիսուսին: Արդյոք ձեր հայացքն ուղղվա՞ծ է ձեր ժողովրդականությանը, ձեր եկեղեցու վրա: Ո՞րն է ձեր հասարակական դիրքն այս աշխարհում: Թե դուք տեսնո՞ւմ եք Հիսուսին, Ով կարեկցությամբ Իրեն դրեց բարձունքներում՝ Մեծության աջ կողմում, Ով չարչարվեց որպես նահատակ, արդարն անարդարների համար: Չե՞ք կարող ձեր աչքերը բարձրացնել և տեսնել այդ Կյանքի Ծառին այնտեղ: Ուրեմն թողեք գիտության և իմաստության այս ծառը և ծառայեք Նրան:

133 Կուզեի՞ք, որ ձեզ հիշենք աղոթքի մեջ, մինչ իմ աղոթելը: Բարձրացրե՛ք ձեր ձեռքերը ինչ կարիք էլ որ

ունենաք։ Թող Աստված օրհնի ձեզ։ Նա տեսնում է ձեր բոլորի ձեռքերը։

134 Եթե դու մեղավոր ես, բարձրացրո՛ւ հիմա աչքերդ և նայի՛ր։ Եթե դու անտարբեր ես եղել, եթե փոքր վեճ և փոքրիկ բաներ ես ունեցել, ի՞նչ տարբերություն։ Դու մի օր հեռանալու ես այս կյանքից։ Ո՞ր օրը։ Գուցե այսօր։ Դու չգիտես։ Մեկ ժամ հետո դու կարող է դժոխքում կամ էլ երկնքում հայտնվես։ Բայց հիմա դու պետք է ընտրություն կատարես։ Եթե քո կյանքում ինչ-որ սխալ բան կա, ընտրի՛ր հիմա հավատքով։

135 Դուք ասում եք. «Դե, եթե ես կարողանայի հաշիվներս մաքրել նրա հետ։ Եթե ես կարողանայի հաշիվներս փակել նրա հետ»։ Կարևոր չէ, թե ինչ են արել նրանք, ընտրե՛ք Կյանքը։ Ընտրե՛ք Կյանքը։

136 Որովհետև Հիսուսն ասաց. «Եթե դուք սրտանց չներեք մարդկանց իրենց հանցանքները, ձեր երկնավոր Հայրն էլ ձեզ չի ների ձեր հանցանքները»։ Այնպես որ դա ականջներիդ օղ արեք։ Եթե քո սրտում ինչ-որ բան կա որևէ մեկի դեմ՝ լինի դա մեղավոր կամ սուրբ, դու դժոխային կրակի վտանգի մեջ ես։

137 Հիմա բարձրացրո՛ւ աչքերդ։ Ի՞նչ ես տեսնում, քո թշնամո՞ւն։ Թե՞ քո Փրկչին ես տեսնում։ Ինչի՞ն ես նայում այս առավոտ։

138 Եթե դու հիվանդ ես, և բժիշկդ ասում է, որ չես կարող ապաքինվել, հայացքդ ուղղիր խաչին, որտեղ Նա մեր մեղքերի համար վիրավորվել է և Նրա վերքերով մենք բժշկված ենք։ Մի՛ նայեք բժշկի ասածներին, նա աշխատում է գիտական ոլորտում։ Հավատքը գործում է Հոգու և Աստծո ոլորտում։ Եկե՛ք հիմա մտածեք այս բաների մասին, մինչ բարձրացրել եք ձեր ձեռքերը։ Աստված տեսել է դրանք։

Աղոթենք։

139 Ո՛հ հավիտենական Աստված, այս երկրպագության լռության մեջ, այն բանից հետո, երբ Պատգամը քարոզվեց, թույլ մի տուր, Տե՛ր, որ Քո Խոսքի սերմերն ընկնեն քարքարոտ հողի մեջ։ Թույլ մի՛ տուր, Տե՛ր, որ պատգամը ընկնի փշերի և տատասկների մեջ, որ այս կյանքի հոգսերը (Ղովտի նման) չխեղդեն այն մինչև վերջ, դարձնելով մերժված։ Բայց, ո՛հ օրհնյալ Աստված, թող այն ընկնի բարի, պարարտ հողի մեջ, զղջացող սրտերի մեջ։ Նույնպես էլ իմ սրտում, Տե՛ր,

որ մենք բոլորս կարողանանք նայել Աստծո հաելիով և տեսնենք Տեր Հիսուսի մերժված Եկեղեցին, մերժված մարդկանց, մերժված ճանապարհը և քայլենք այդ փառավոր ճանապարհով:

140 Մովսեսի պես, նա չգիտեր, թե ուր է գնում: Մարդիկ չգիտեին՝ ուր են գնում: Նրանք չգիտեին, որ կողմով գնան: Պարզապես ճանապարհ ընկան:

141 Եվ, ո՛վ Տեր Աստված, երբ այս գեղեցիկ օրհներգը հնչում է, հավատքով մենք տեսնում ենք հեռվից այդ Երկիրը: Թող այստեղ գտնվող տղամարդիկ և կանայք չմտածեն այն մասին, թե աշխարհն ինչ է ասելու կամ թե ինչպես նրանք կընթանան: Թող նրանք պարզապես բարձրանան իրենց հոգու մեջ և գնան:

142 Մովսեսը հետևեց Լույսին և Այն նրան տարավ խոստումի երկիր: Նա չգիտեր, թե ուր է գնում, բայց նա պարզապես քայլում էր այդ Լույսի մեջ դեպի այդ երկիրը, որն ավելի լուսավոր էր, քան օրը:

143 Շնորհի՛ր, Տե՛ր, այսօր, որ այստեղ գտնվողներից շատերը քայլեն Սուրբ Գրքի Լույսի և Սուրբ Հոգու հաղորդակցության մեջ, և Եկեղեցու հետ. Եկեղեցու, Առաջնեկի, նորածին երեխաների, ովքեր ընդունել են Քրիստոսին, և լցված են եղել Սուրբ Հոգով, առաջնորդված Հոգով: Թող մենք միասին քայլենք այս հաղորդակցության մեջ Աստծո կանոնների շուրջ, ծառայելով Իրեն մկրտությամբ, հնազանդվելով Նրա մահվանը, թաղմանը և հարությանը: Թող ծառայենք Իրեն Իր պատվերի համաձայն. *«Մնացե՛ք Երուսաղեմում՝ մինչև վերից զորությամբ օժտվեք»:* Թող ծառայենք Իրեն աստվածային բժշկության մեջ՝ աղոթելով հիվանդների համար: Թող ծառայենք Իրեն հաղորդության մեջ, հացը կտրելով սրտի միաբանությամբ՝ հաղորդակցվելով Աստծո Խոսքի շուրջ: Թող ծառայենք Իրեն Իր բոլոր աստվածային կանոնների համաձայն, մինչև տեսնենք այդ Երկրիը: Շնորհի՛ր դա, Տե՛ր: Լսի՛ր մեր աղոթքը, քանզի մենք այս ամենը հանձնում ենք հիմա Քեզ Տեր Հիսուսի Անունով:

144 Այժմ խոնարհած գլուխներով կամաց, դանդաղ եկե՛ք երգենք այս երգը: Հիմա սա է երկրպագությունը: Պատգամն ավարտվեց: Թող ոչ ոք չհեռանա: Պարզապես հանդարտ մնացեք: Եկե՛ք երկրպագութուն անենք:

145 Պատգամն ուղղիչ է: Մտածե՛ք հիմա այն մասին, թե ինչ

եք արել, ինչ պետք է անեիք և ինչն է ձեզ դարձրել այն, ինչ կաք այսօր: Այսօր ձեզ ինչ–որ բան է հանդիմանում, որովհետև երեկ ինչ–որ մի բան եք արել: Ի՞նչ է դրա հետ լինելու վաղը: Ծտկե՛ք դա այսօր, և վաղը դուք ազատ կլինեք: Հասկանո՞ւմ եք: Դուք պետք է ընտրություն կատարեք: Ինչպե՞ս կարող եք դա անել: «Հավատքով ես հիմա ազատվում եմ ամեն ինչից: Ես հիմա ազատվում եմ, և մի օր կգնամ Այնտեղ»:

Երջանիկ մի օր
Մենք կհանդիպենք այն գեղեցիկ...

Պարզապես հիմա երկրպագեք Տիրոջը ձեր հոգում:

Երջանիկ մի օր,

Կդիմավորենք այդ արհամարհված Եկեղեցուն: Հեշտ չէ գնալը, բայց մի օր մենք կհանդիպենք:

Մեր լիառատ Հորը երկնային
Փառաբանության տուրք կմատուցենք
Նրա սիրո փառավոր պարգևի
Եվ օրհնությունների համար, որոնք
  լուսավորում են մեր...

Հավատքով ես ընտրում եմ լինել Տիրոջ արհամարհված փոքր խմբի հետ:

Երջանիկ (երջանիկ) մի...(մի օր)
Մենք կհանդիպենք այն գեղեցիկ ափին.
  (մի օր):
Երջանիկ (երջանիկ) մի օր
Մենք կհանդիպեք այն գեղեցիկ ափին:

Այնտեղ մի Երկիր կա, որը....

Պարզապես երկրպագեք Նրան: Սա՛ է երկրպագությունը:

...հավատքով ես կարող եմ տեսնել...

Հավատքով ես կատարում եմ իմ ընտրությունը:

Ո՛հ, Հայրը սպասում է...

146 Ես տեսնում եմ Այնտեղ Տիրոջ եղողներին՝ եղբայր Ջորջին, եղբայր Սեվարդ, բոլոր սուրբերին:

Այնտեղ մեզ համար բնակարաններ...
  (Այո՛, Տե՛ր):
...երջանիկ...

147 Նրա հայրը՝ Հովարդը, Եդվարդը, բոլոր տարեց սուրբ բարեկամները, ովքեր տարիներ առաջ ընտրել են այս Ճանապարհը։

Երջանիկ (Այո՛, Տե՛ր) մի օր (մի օր)
Մենք կհանդիպենք այն գեղեցիկ ափին։

Կերգենք այդ գեղեցիկ...(Ո՛հ, Աստված)։
Երջանկության մեղեդային երգերը (Փա՜ռք Աստծուն)։
...այլևս ցավ չի լինելու,
Ոչ էլ հառաչոց այդ Հանգստավայրի օրհնությունների համար։

Երջանիկ, երջանիկ մի...(մի օր)
Մենք կհանդիպենք այն գեղեցիկ...

58-0720M Հավատով Մովսեսը...
Բրանհամի Խորան
Ջեֆերսոնվիլ, Ինդիանա ԱՄՆ

ARMENIAN

©2024 VGR, ALL RIGHTS RESERVED

Voice Of God Recordings
P.O. Box 950, Jeffersonville, Indiana 47131 U.S.A.
www.branham.org

Հեղինակային Իրավունքի Ծանուցում

Բոլոր իրավունքները պաշտպանված են: Այս գրքույկը կարող է տպվել տան տպիչի վրա անձնական օգտագործման համար կամ անվճար տրվել՝ որպես գործիք Հիսուս Քրիստոսի Ավետարանը տարածելու համար: Այս գրքույկը չի թույլատրվում վաճառել, պատճենահանել մեծ քանակությամբ, տեղադրել սոց. կայքերում, պահել ԷՀՄ-ում, թարգմանել այլ լեզուներով կամ օգտագործել դրամահավաքի համար առանց Voice Of God Recordings-ի գրավոր թույլտվության:

Հավելյալ տեղեկություն կամ այլ հասանելի նյութեր ձեռք բերելու համար խնդրում ենք կապ հաստատել հետևյալ հասցեով՝

VOICE OF GOD RECORDINGS
P.O. BOX 950, JEFFERSONVILLE, INDIANA 47131 U.S.A.
www.branham.org